



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐՐՈՐԴ ՆԻՍԻԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի հունիսի 24-ին ժամը 15:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ երրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 19 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Մարիամ Պողոսյանը, համայնքի ղեկավարի օգնական Սոնա Մաթևոսյանը, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Քալաշյանը, «Բարեկարգում» տնօրինության տնօրենի ժ/պ Մամիկոն Աբրահամյանը, Բնակարանային կոմունալ վարչության պետ Արմեն Մելքոնյանը և համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի հունիսի 24-ի արտահերթ երրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՏԵՄՎՈՂ ԲԱՅ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 2023- 2024ԹԹ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 5.ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՅ ՓՈԽԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 6.ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**8.ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**9.ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**10. ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 106 որոշումը:

**Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը նոր համադրված համայնքային ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 107 որոշումը:

**Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի ԹԻՎ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 108 որոշումը:

**Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի «Բարեկարգում» տնօրինություն բյուջետային հիմնարկի կողմից նախատեսվող Բաց մրցույթի հայտերի ներկայացման սահմանված ժամկետը կրճատելու և ֆինանսավորումը 2023-2024թթ-ի ընթացքում հատկացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցեր տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Ենոքյան Ռուբիկը:

Հարց: Ենոքյան Ռուբիկ. Թերի կատարված աշխատանքները ում հաշվին են վերացվում:

Պատասխան: Դ. Գասպարյան. Թերի կատարված աշխատանքների համար պատասխանատու է շինարարական կազմակերպությունը, աշխատանքները ընդունելու ընթացքում թերությունները արձանագրվում են և կապալառուն պարտավորվում է վերացնել դրանք:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 109 որոշումը:

**Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 11 որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցեր տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Ենոքյան Ռուբիկը:

Հարց: Ենոքյան Ռուբիկ. Ավելացվող էլեկտրիկի հաստիքի համար աշխատավարձը ավելի բարձր է քան նախկինում հաստիքացուցակում ընդգրկված էլեկտրիկի հաստիքը:

Պատասխան: Դ. Գասպարյան. Ավելացվող հաստիքով էլեկտրիկի աշխատավարձի չափը պայմանավորված է աշխատանքի ծավալով:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 110 որոշումը:

**Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց Բնակարանային կոմունալ վարչության պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով տրանսպորտային միջոցը հիմնարկի հաշվեկշռից փոխանցելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 111 որոշումը:

**Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկության մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 112 որոշումը:

**Նիստը վարողը ժամը 15:50 հայտարարեց ընդմիջում 10-ից 15 րոպեով:  
Ընդմիջումից հետո նիստը շարունակվեց:**

**Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային եղանակով կառուցապատման իրավունքով ժամկետային օգտագործման տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ տվյալ տարածքը տրամադրվում է համայնքի համար գրադարնի նոր շենք կառուցելու համար, ներդրողը շենքը կառուցելուց հետո հանձնելու է համայնքին: Շենքի ճարտարապետն է Տիգրան Բարսեղյանը, շենքը եռահարկ է լինելու, գրադարանի ընդհանուր մակերեսը լինելու է մոտ 1000 քմ մետր:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Սևակ Խաչատրյանը և Արմեն Դաավթյանը:

Հարց: Սևակ Խաչատրյան. Կանաչ գոտին պահպանվելու է:

Պատասխան: Դ. Գասպարյան. Կանաչ գոտին անպայման պահպանվելու է:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Հարց: Արմեն Դաավթյան. Իսկ գրադարանի հին շենքի հետ ինչ է լինելու:

Պատասխան: Դ. Գասպարյան. Շենքը գնահատված է հարյուր տասներեք միլիոն, իսկ կառուցվելիք շենքի արժեքը կրկնակի ավել է, այն համապատասխան ձևակերպումներից հետո կտրամադրվի կառուցապատողին, հավանաբար փոխանակության միջոցով:

**Քվեարկության մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**  
կողմ - 19  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 113 որոշումը:

**Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 114 որոշումը:

**Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 115 որոշումը:

**Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

**Քվեարկությանը մասնակցեց** – ավագանու 19 անդամ

**Քվեարկության արդյունքները՝**

կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 116 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: